ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1954 Общественные науки

Էդ. Թոփչյան

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Սովետահայ գրականության ականավոր վարպետ Դերենիկ Դեմիրճյանն անցել է ավելի քան հիսունամյա ստեղծագործական ուղի։ Նրա առաջին բանաստեղծությունները տպագրվել են դեռևս անցյալ դարի վերջերին, երբ Ռուսաստանում և Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման և բանվորական շարժման հողի վրա սկսել էր լայնորեն տարածվել մարքսիզմը։

Պատմական այդ ժամանակաշրջանում հայ գրականության մեջ ավելի խորացավ հակադրությունը և պայքարը դեմոկրատական տենդենցների ու բուրժուական նացիոնալիզմի միջև։ Հակառակ նացիոնալիստական գրականության, որը հրահրում էր ազգային թշնամանք, ձգտում էր հեռու պահել հայ աշխատավոր մասսաներին Անդրկովկասի պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժումներից, հայ ռեալիստական գրականության վարպետները՝ Ագայանը, Թումանյանը, Շիրվանզադեն և ուրիշները, ընթանում էին ռուս գրականության լավագույն տրադիցիաների ուղիով, հայ ժողովրդի ազատագրության հարցը կապում ռուս մեծ ժողովրդի պատմական բախտի հետ։ Դ. Դեմիրճյանը հայ մեծ ռեալիստների կրտսեր ժամանակակիցն էր։ Հեռու լինելով նացիոնալիստական գաղափարախոսությունից, թեև անհետևողականորեն, որոնումներով և սայթաքումներով, բայց նա գնում էր դեմոկրատական գրականության հետքերով։ Հաղթահարելով իր վաղ շրջանի բանաստեղծություններին հատուկ անկումային տրամադրություններն իր սխալ և վերացական ըմբռնումները կյանքի մասին, Դեմիրճյանը նախասովետական շրջանի իր հաջողված գործերում ճշտորեն վերարտադրեց հայ ժողովրդի սոցիալական և ազգային ճնշման մի քանի բնորոշ գծերը։

Դեմիրճյանի ինքնատիպ տաղանդը բուռն կերպով զարգացավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո։ Սովետական կարգերը արվեստագետի համար ստեղծեցին բոլոր պայմանները սերտորեն կապվելու ժողովրդի հետ և գեղարվեստորեն արտահայտելու հայ ժողովրդի նոր կյանքի գծերը։ Դեմիրճյանն ակտիվորեն մասնակցել է սովետահայ գրականության ծագման և զարգացման գործին, իր պատմվածքների, դրամաների և վեպերի մեջ կերտել սոցիալիզմ կառուցող մարդու կերպարը։

Դերենիկ Դեմիրճյանը ծնվել է 1877 թվականին Ախալքալաքում։

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի հայոց ծխական դպրոցում։ 1892 թվականին նա ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որտեղ ուսանելու տարիներին արդեն նրա առաջին բանաստեղծությունները տպագրվում են «Տարազ» և «Մուրճ» ամսագրերում։ Աշակերտական խռովություններին մասնակցելու համար Դեմիրճյանը հեռացվում է ճեմարանից։ Նա գնում է Թիֆլիս, շարունակում ուսումը Ներսիսյան դպրոցում և 1897 թվականին ավարտում է միջնակարգ կրթությունը։

Դժվարություններով և զրկանքներով է անցել Դեմիրճյանի երիտասարդությունը։ Նա զրկված էր ուսուցչությամբ զբաղվելու հնարավորությունից, որովհետև ցարական կառավարության հրահանգով փակված էին հայկական դպրոցները, և երիտասարդ գրողն իր նյութական կարիքը հոգալու համար հարկադրված էր տարբեր աշխատանքներ կատարել, ինչպես օդերևութաբանական կայանի դիտող, հեռավոր խուլ գյուղի փոստակայանի կառավարիչ, հայկական բարեգործական ընկերության տեխնիկական քարտուղար և այլն։ Չնայած հոգեմաշ աշխատանքին, նա միաժամանակ սովորում և ստեղծագործում էր։ Դեմիրճյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս տեսավ 1899 թվականին։ Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Դեմիրճյանը 1905 թվականին մեկնում է Շվեյցարիա, սովորում Ժնևի համալսարանի Բնագիտական ֆակուլտետում, միաժամանակ հետևում գրականության և մանկավարժության դասախոսություններին և ուսանում կոնսերվատորիայում։ 1910 թվականին Դեմիրճյանը վերադառնում է Թիֆլիս և ուսուցչական աշխատանքի անցնում Հովնանյան դպրոցում, դասավանդելով հայոց լեզու և գրականություն։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Դեմիրճյանը փոխադրվում է Երևան և զբաղվում բացառապես ստեղծագործական աշխատանքով։ Սովետական գրականությանը մատուցած ծառայությունների համար Դեմիրճյանը պարգևատրվել է Լենինի և Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։

Իր ստեղծագործական կյանքը Դեմիրճյանը սկսել է որպես բանաստեղծ։ Նրա վաղ շրջանի բանաստեղծությունների և պոեմների համար բնորոշ էին վշտի, միայնության և հուսահատության տրամադրությունները։ Իրականությունից դժգոհ բանաստեղծը ձգտում էր հասկանալ կյանքում տիրող անարդարության, չարիքի, մարդկային վշտի պատճառները։ Բայց նրա այդ ձգտումը արտահայտվում էր վերացական, մեծ մասամբ սիմվոլիստական պատկերների միջոցով, որոնք ընթերցողին հեռացնում էին մարդկային իրական փոխհարաբերություններից և ոչ միայն չէին օգնում, այլև ավելի մթագնում էին իրական կյանքի ճանաչման հնարավորությունը։ Այդ բնույթն են կրում Դեմիրճյանի վաղ շրջանի պոեմները և բանաստեղծությունները։

Դեմիրճյանի պոեզիայի մեջ արժեքավոր գործ է «Լենկ-Թեմուր» պոեմը, որտեղ հեղինակը գեղարվեստորեն վերարտադրում է հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջերից մեկը՝ արևելյան բռնակալ Լենկ-Թեմուրի արշավանքը Հայաստան։ Բանաստեղծը նկարագրում է Լենկ-Թեմուրի սոսկալի կոտորածները և ավերածությունները, բայց բռնակալը չի կարողանում ընկճել ժողովրդին, որն արյունոտուշտ նվաճողին ուղղում է այս իմաստուն խոսքերը՝ նվաճողները կգան ու կգնան, բայց հավերժորեն կապրի ժողովուրդը՝ կյանք ստեղծողը։ Բանաստեղծը գրում է.

Քանի դիշերներ եկել են անցել,
Սև բուերի պես հայոց աշխարհից...
Երթան ու չգան անցած դիշերներ,
Կանցնի այս մեկն էլ հայոց աշխարհից...

Այս հավատը բնորոշ է մեր ժողովրդի համար, ժողովուրդ, որը

դարերի ընթացքում արիաբար պաշտպանել է իր ազատությունն ու անկախությունը, որն օտարերկրյա նվաճողների ավերածություններին և նախճիրին հակադրել է ոչ միայն իր ռազմական կորովը, այլև շինարարական անխոնջ ոգին, ապրելու և ստեղծագործելու անսահման ուժը։

Իր ստեղծագործական կյանքի հետագա տարիներին Դեմիրճյանն ստեղծեց մի շարք պատմվածքներ, ինչպես «Ավելորդը», «Տերտերը», «Ստամոքսը», «Խանութպանը», «Ժպիտը» և ուրիշները։ Այդ պատմվածքներում երբեմն նուրբ հումորով, երբեմն հոգեբանական մերկացնող վերլուծումներով դրոդը պատկերում է մասնավոր սեփականատիրական կարգերում խեղանդամված մարդկանց։ Դեմիրճյանի այս գործերում արդեն նկատվում է Ն. Վ. Գոգոլի ստեղծագործական հնարանքների ազդեցությունը, հատկապես կերպարները երգիծական երանգով տիպականացնելու արվեստի մեջ։ Դեմիրճյանի արվեստի այս գիծը ավելի ցայտուն կերպով հանդես է գալիս սովետական շրջանի երկերում։

Թոթափելով իր բանաստեղծություններին հատուկ հոռետեսական տրամադրությունները, արձակի մեջ Դեմիրճյանը դրսևորում է մարդկային փոխհարաբերությունների և հոգեբանության նուրբ իմացություն։ Իր առաջին պատմվածքներից մեկում «Ավելորդը» (1915) խորագրով հեղինակը նկարագրում է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սուլթանական Թյուրքիայի կազմակերպած կոտորածը և հայերի տեղահանությունը իրենց հայրենի ավանդական հողերից։ Վաճառական Հաջի աղան, որ ապրել է տաճկական բռնակալության շատ արհավիրքներ, լսելով որ տաճիկները մոտենում են հայրենի քաղաքին, որոշում է հեռանալ, ազատել ունեցվածքը։ Նա գաղթում է իր ընտանիքով, փրկում նաև հարստությունը, բախտի քմահաճույքին թողնելով անսահման բարի, անդամալույծ քրոջը, նրան համարելով «ավելորդ»։ Սրբունը մենակ է մնում քաղաքում, բայց նա անհանգստանում է ոչ թե իր, այլ գաղթողների համար։

Երբ ռուսական բանակը նորից ետ է վերցնում քաղաքը, վերադառնում են գաղթողները, պարզվում է, որ Սրբունը անհետ կորել է։ Հաջի աղան սկսում է տանջվել, նա զգում է, որ հարստության համար զոհել է հարազատ քրոջը և սարսափում է աստծու պատժից։

Հաջի աղան ցանկանում է ազատվել խղճի հետապնդումից, փողով գնել հարստանալու համար կորցրած մարդկային հատկությունները։

Հարստություն կուտակելու կիրքը հայր աղայի մարդկային զգացմունքները փոխարինել է մասնավոր սեփականատիրական զգացմունքներով, այդ պատճառով նա իր անհատական շահից զատ ոչինչ չի տեսնում։ Միանգամայն այլ հատկություններով է օժտված Սրբունը. նա բարի է և մարդասեր։ Հրաժեշտի պահին, երբ Հաջի աղան դաժան անտարբերությամբ թողնում է նրան, իր գործած ձեռնոցները Հաջուն մեկնելով, Սրբունն ասում է. «Ձեռքերդ անցու, ճամբան չմրսիս»։ Սրբունը և Հաջի աղան հակադրություններ են, անդամալույծը վեհանում է իր խորը մարդկայնությամբ, իր ջերմ սիրով դեպի մարդը, իսկ Հաջի աղան նսեմանում՝ իր դաժան հակամարդկային արարքով։

Շահամոլության և կեղծիքի մեջ վաճառականին չի գիջում հոգևորականը։ Աշխուժանում է բթամիտ տեր Հմայակը («Տերտերը»), իմանա-

լով, որ մեռնում է իր «մրցակիցը», և իրեն պիտի անցնեն նրա ծխերը։ Նստած մեռնողի կողքին, նա ներքին հրճվանքով հաշվում է սպասվող եկամուտները, անտարբեր մնացած ամեն ինչի նկատմամբ։ Տերտերն իր էությամբ նույն Հաջի աղան է՝ կրոնավորի զգեստով, նրա մեջ խտացված է նույն էգոիզմն ու երեսպաշտությունը։

Դեմիրճյանն իրրև արձակագիր հանդես եկավ այն ժամանակաշրջանում, երբ խուլացել էր սոցիալական կյանքի հակասությունները խոր և բազմակողմանի վերարտադրելու՝ հայ քննադատական ռեալիզմի ուժը։

Դատապարտելով բուրժուական հասարակությանը, որը տրորում էր մարդկային անհատին հոգեպես և ֆիզիկապես, բայց իր աշխարհայացքի սահմանափակության պատճառով ժամանակի իրականության մեջ չտեսնելով ցարիզմի և բուրժուազիայի դեմ մարտնչող իսկական մարդկանց, Դեմիրճյանն իր հայացքն ուղղում էր դեպի պատմական անցյալը, պատմության մեջ էր որոնում հերոսներ։ Դեմիրճյանի աշխարհայացքի այս առանձնահատկությունը արտահայտվել է նրա դրամատուրգիայի մեջ։

Նախասովետական շրջանում Դեմիրճյանը գրել է «Վասակ», «Դատաստան» և «Հովնան մեծատուն» դրամաները։ «Վասակ» դրամայում Դեմիրճյանը փորձել է նկարագրել 5-րդ դարում պարսկական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը։ Սակայն դրամայի մեջ ճիշտ չէին մեկնաբանված ժողովրդական պայքարի իսկական պատճառները, Վասակի գործունեության դավաճանական բնույթը և Վարդան Մամիկոնյանի անձնազոհ ծառայությունը հայրենիքին։

Գեղարվեստական և գաղափարական տեսակետից ավելի հաջողված է «Դատաստան» դրաման, որի նյութը նույնպես պատմական բնույթ է կրում։ Դրամայում նկարագրվող դեպքերը տեղի են ունենում Հին Ջուղա քաղաքում, որն առևտրական կապերի մեջ էր հեռավոր երկրների հետ և որտեղ արդեն մուտք էին գործել բուրժուական հարաբերությունները իրենց սոցիալական և բարոյական նորմաներով։ «Դատաստան» դրամայում Դեմիրճյանը գեղարվեստորեն բացահայտում է նոր աշխարհազգացման, մարդու բնական ձգտումների և մարդկանց կյանքի վրա ծանրացած միջնադարյան կրոնական նախապաշարումների հակասությունը։ Նադաշի, Թանդիկի, Սիրվարդի, Պողոսի կերպարներով հեղինակը ցույց է տալիս, որ ամենուրեք տիրապետում են աշխարհիկ հակումները, մինչդեռ առերևույթ իշխող կրոնական գաղափարները ուղղված են մարդու իսկական բնության դեմ։

Պատմական թեմատիկայի միջոցով արտահայտած աշխարհիկ կյանքի պաշտպանությունը, իր ժամանակաշրջանի գրականության համար առաջադիմական նշանակություն ուներ. այն ուղղված էր կրոնական իդեալներով տոգորված սիմվոլիստական, անհատապաշտական ռեակցիոն գրականության դեմ։

Հայ ժողովրդի 1915 թվականի կոտորածները և արտորը, որ ոճրագործ հետևողականությամբ իրականացրեց թյուրքական կառավարությունը, նկարագրության նյութ է դարձել Դեմիրճյանի «Հովնան մեծատուն» դրամայի համար։ Հարուստ Հովնանի տանը հարսանիք է, խրախճանք, և հանկարծ գույժ է տարածվում, որ հայերը պետք է տեղահանվեն և ուղարկվեն Միջագետք։ Հովնանը չի հավատում, նա միամտորեն ապավինում

է Թյուրքիայի «արգարությանը», բայց հայության կոտորածի լուրը շուտով գառնում է գառն իրողություն։ Համակերպվելով արհավիրքին, հովնանը հասնում է գավաճանության, նա ծախում է իր հարազատներին, իր ազգամեջի գոյությունը պահպանելու համար։ Սարևնը, Հերիքը և ուրիշները, ոչ թե հնազանդվում, այլ կռվում են թյուրքական վայրագությունների դեմ, նրանք ժողովրդի իսկական զավակներն են, ժողովուրդ, որ տերոսաբար դիմագրում էր թյուրքական արյունռա յաթաղանին։ «Հովնան մեծատունն» գրամայում նկատվում են անկումային գրականության տարրերը, գրաման ասդորված է հուսահատական տրամադրությամբ, հեղինակը ելք չի տեսնում թյուրքական բռնակալության ճիրաններում տառապող ժողովրդի համար։

Սոցիալիստական ռևոլյուցիան արմատական բեկում առաջացրեց Դեմիրճյանի ստեղծագործության մեջ։ Փոխվեց ոչ միայն նրա ստեղծագործության բովանդակությունը, այլև գեղարվեստական ձևը։ Նախկին խեղաթյուրված մարդկանց փոխարեն Դեմիրճյանի սովետական ժամանակաշրջանի գործերում հանդես են գալիս ամուր և առողջ մարդիկ՝ համակված աշխատանքային մեծ պաթոսով, հումանիզմով, անհագուրդ սիրով դեպի գիտությունը և լուսավորությունը, նոր վերաբերմունքով դեպի սոցիալիստական սեփականությունը։ Այդպիսի հերոսներ են նրա կայարանի Ակորը, Մերկեն, Արդուլը, Սաթոն, Նիդյարը, Իաշիքը և շատ ուրիշները։ Մարդու վերափոխման պրոցեսը սոցիալիզմի պայմաններում սովետական գրականության հիմնական թեմաներից մեկն է։ Դեմիրճյանը այդ խնդրին մոտեցել է հոգեբանական տեսակետից, իր ամեն մի նոր գործում հայտաբերելով սովետական մարդու բնավորության մի նոր գիծը։ Դեմիրճյանը տեսանելի կոնկրետությամբ նկարագրում է սովետական մարդու հոգևոր կերպարի ձևավորման պրոցեսը, նրա նվիրվածությունը Սովետական պետությանը, մեր գարաշրջանին և նրա առաջավոր իդեալներին։

Դեմիրճյանի հերոսի ստեղծագործական կարողություններն ուղղված են աշխարհի վերափոխմանը։ Սոցիալիստական աշխատանքի մեջ մարդը դուրս է գալիս նեղ անհատականության սահմաններից, նա փոխում է աշխարհը, սոցիալիստական աշխատանքի մեջ փոխվում է և ինքը՝ մարդը։ Սովետական մարդու ստեղծագործության այդ հիմնական հատկությունը Դեմիրճյանը գեղարվեստորեն վերարտադրել է իր մի շարք պատմվածքների մեջ։

Ժողովրդական տնտեսության վերականգնման և երկրի սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարի ժամանակաշրջանը Դեմիրճյանի համար սովետական կյանքի ճանաչման և նոր թեմատիկայի ստեղծագործական յուրացման ժամանակաշրջան էր։

Այդ տարիներին Դեմիրճյանը մամուլում հաճախ հանդես էր գալիս նոր մարդկանց նվիրված ակնարկներով ու կարճ պատմվածքներով։ Այդ նախապատրաստական մի աշխատանք էր սովետական կյանքի գեղարվեստական ավելի խոր ընդհանրացումների համար։

Դեմիրճյանի ստեղծագործական զարգացման համար բնորոշ են նաև այդ տարիներին գրած սրամիտ ֆեյլետոնները, որոնց մեջ նա մերկացնում էր անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գիշատիչ բնույթը, ծաղրում էր բյուրոկրատիզմը, կլոնական նախապաշարումները, կապիտալիզմի մեռացորդ-

ները կենցաղում և մարդկանց գիտակցության մեջ։ Ցույց տալով հնի և նորի պայքարը, Դիմիրճյանը սպանիչ երգիծանքով դատապարտում էր հինը, հետամնացը և ջերմորեն պաշտպանում էր նորը և առաջավորը, որպես սովետական կյանքի հարաճուն հաղթանակի արտահայտություն։ Բայց Դեմիրճյանը միանգամից չազատվեց հին հայացքներից և կյանքի թյուր ըմբռնողությունից։ Այդ ցույց է տալիս 1922 թվականին գրված «Միայն մեկը» պատմվածքը, որտեղ հեղինակը նկարագրում է իմպերիալիստական պատերազմի սոսկալի ազդեցությունները։

Այդ պատմվածքն ունի գաղափարական լուրջ թերություններ, հեղինակին չի հաջողվել ցույց տալ նկարագրվող պատերազմի իմպերիալիստական-թալանչիական բնույթը և պատերազմի մասնակից աշխատավոր մարդկանց ոգեղեցիկ գիտակցության աճումը։ Գնահատելով այդ բնույթի պատմվածքները, Ի. Վ. Ստալինը գրում է. «Դրաշուկայում կան շատ գեղարվեստական պատմվածքներ, որոնք նկարագրում են պատերազմի «սարսափները» և դարշանք են ներշնչում դեպի ամեն մի (ոչ միայն իմպերիալիստական, այլև ամեն մի այլ) պատերազմ։ Դրանք բուրժուա-պացիֆիստական պատմվածքներ են, որոնք մեծ արժեք չունեն։ Մեզ հարկավոր են այնպիսի պատմվածքներ, որոնք ընթերցողներին իմպերիալիստական պատերազմի սարսափներից տանում են դեպի այդպիսի պատերազմներ կազմակերպող իմպերիալիստական կառավարություններին հաղթահարելու անհրաժեշտությունը»[1]։

«Միայն մեկը» պատմվածքից հետո Դեմիրճյանը գրում է մի շարք նոր գործեր, որոնց հիմնական բովանդակությունը սոցիալիստական ոգեղեցիկության հետևանքով մարդկանց կյանքի մեջ ստեղծված մեծ հեղաշրջման առանձին արտահայտություններն էին։ Այդ թեման են դրսևորում «Մերկեն», «Արդուլը», «Սաթոն», «Նարգիզը» և ուրիշները։ Հակառակ «Միայն մեկը» պատմվածքի անանուն հերոսի, որը շահագործման և ճնշման պայմաններում մոլորվել է, մանրացել, կորցրել իր մարդկային կոչումը և սեփական անունը, սովետական կարգերի պայմաններում անցյալում ճնշված և կեղեքված մարդիկ վերածնվում են, հանդես գալիս մարդկային բնության իրենց ողջ գեղեցկությամբ։ Եվ որ իրենց կյանքի նախասովետական շրջանում անանուն մարդիկ են եղել նաև Մերկեն, Արդուլը, Նարգիզը և մյուսները. այդ պատճառով շատ բնորոշ է, որ միայն սովետական կարգերում ապրելով իսկական կյանք, ծերուկ Մերկեն մահվան պահին խորապես ափսոսում է, որ ավելի շուտ չեն եկել սովետական կարգերը։

«Սաթոն» պատմվածքում Դեմիրճյանը պատկերում է հասարակ, աշխատավոր կնոջ վերափոխությունը սովետական կյանքի ազդեցությամբ։ Պատմվածքի սկզբում Սաթոն երկյուղածությամբ կատարում է տնային աշխատողի իր ծանր պարտականությունը և այդ պարտականություններից զուրս որևէ այլ պահանջ չունի։ Նրան թվում է, թե ամրատյաններն իրեն շնորհ են արել դարձնելով տնային աշխատող և ձգտում է ամենայն աշխատանքով հատուցել նրանց։ Ամրատյանների բնտանիքում գեռևս շարունակվում են պահպանվել հին, քաղքենիական աշխարհի օրենքները. Սաթոն կոչված է աշխատելու, իրենք՝ վայելելու։ Բայց նրանք

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 197—198։

պիտին, որ իրենց ընտանիքից դուրս օրենքները փոխվել են, այդ պատճառով էլ ամեն կերպ ջանում են Սաֆոյին հեռու պահել արտաքին աշխարհից, զրկել մարդկանց հետ շփվելու հնարավորությունից։ Այդ բանը չի հաջողվում։ Սովետական կյանքի սկզբունքները անխուսափելիորեն գտնում են Սաֆոյի սեփականությունը. նա ճանաչում է աշխատանքի մարդու՝ իր իրավունքներն ու արժանապատվությունը, վերափոխվում և ակտիվորեն մասնակցում սոցիալիստական հասարակության կառուցմանը։ Սաֆոյի և ամբատյանների՝ մասնավորապես տիկին Ամբատյանի բարոյական պայքարը ավարտվում է Սաֆոյի լիակատար հաղթանակով։ Դեմիրճյանը ցույց է տալիս, որ շնորհ են անում ոչ թե ամբատյանները, այլ Սաֆոն՝ աշխատանքի մարդը, որն իր աշխատանքով պահպանել է ամբատյանների տիպի պորտաբույծների գոյությունը, որ այժմ արդեն ժամանակները փոխվել են՝ միլիոնավոր սաֆոներ, գիտակցելով իրենց ուժը, հանդես են գալիս կյանքի, երկրի տիրող իրենց իրավունքների պաշտպանությամբ։

Արդուլը՝ համանուն պատմվածքի հերոսը, իսկական կյանքի ըմբռնմանը հասնում է սոցիալիստական աշխատանքի մեջ։ Նա եկել է Պարսկաստանից և որպես բանվոր աշխատում է Երևանի բամբակագործ գործարանում։ Արդուլի կյանքը Պարսկաստանում անցել է տաժանակիր աշխատանքի և մշտական քաղցի մեջ։ Քաղցին զոհ են գնացել նրա կինը և որդին, հարազատները և բարեկամները, քաղցը նրան արտաքսել է հայրենի երկրից, իսկ սովետական երկրում նա գտնում է իր աշխատանքի տերը, ըմբռնում նախկին և այժմյան աշխատանքի տարբերությունը։ «Այստեղ գործն ուրիշ տեսակ էր։ Նախ՝ նա տանջանք չէր, այլ աշխատանք։ Ապա և այդ գործը նրան բարեկամ էր և ոչ այնպիսի դաժան թշնամի, որը լկում է, ծեծում, հյուծում, տանում գերեզմանը»։

Արդուլը եկել էր այն մտադրությամբ, որ որոշ դումար վաստակեր և վերադառնար Պարսկաստան, բայց սովետական կյանքի պայմաններում փոխվում է Արդուլը, նրա հոգում ավելի ու ավելի օտարանում է Պարսկաստանը, վայրենի շահագործման ու կեղեքման երկիրը։ Սոցիալիստական աշխատանքը բարձրացնում է նրան, կապում բանվորական կոլեկտիվի և գործարանի հետ, դարձնում գիտակից քաղաքացի։ Աշխատանքը նրա համար դառնում է պատվի գործ։ «Արդուլը պարզ տեսնում էր, որ այս իր գործարանը կապված է քաղաքի մյուս գործարանների հետ, քաղաքինը մյուս քաղաքների հետ և բոլորի աշխատանքի արդյունքը մանր գետերի պես հոսում, լցվում է մի մեծ արդյունքի՝ ծովի մեջ և այդ ծովը պրոլետարական պետությունն է»։ Պրոլետարական պետությունն իր հարազատ պետությունն է,—այս գաղափարը Արդուլին մղում է անձնազոհության։ Նա իրեն նետում է գործարանում բռնկված հրդեհի բոցերի մեջ, ազատելու իր ընկերներին և փրկելու համայնական սեփականությունը։

Սովետական հարուստ և բազմաբովանդակ կյանքն իր մի շարք կողմերով, ինչպես Կարմիր Բանակի մարտիկների և սովետական սահմանապահների կյանքը, դասակարգային պայքարը գյուղում, մարդկանց հոգեբանության վերափոխումը սոցիալիստական շինարարության մեջ և այլն, Դեմիրճյանի երկերի մեջ վերարտադրվել են իրենց տիպական գծերով։

Նոր մարդու ձևավորման պրոցեսը Դեմիրճյանն արտահայտել է

«Նիգյարա» վիպակում, որը սովետահայ գրականության լավագույն նվաճումներից մեկն է։ Դեմիրճյանը ցույց է տալիս, թե ինչպես ազգությանությունը հաղթահարում է սեփականատիրական կարգերից ժառանգություն մնացած բնատնեկան, կենցաղային և կրոնական նախապաշարումները, սովորում և դաստիարակվում է կոմունիստական շարքերում, դառնում հասարակական ակտիվ աշխատող։ Բայց Նիգյարը հեշտությամբ չի անցնում կյանքի այդ ճանապարհը։ Նրա ամուսինը՝ Ասատը ամեն կերպ արգելակում է կնոջը շփվել հասարակական կյանքի հետ։ Ասատի հետամնաց ծնողները անպատվություն են համարում այն, որ Նիգյարը դուրս է գնում առանց չադրայի, խոսում է օտար տղամարդկանց հետ, հաճախում ազատական կանանց ակումբը։ Նիգյարը դժվարին կացության մեջ է։ Նա երկու աշխարհ է տեսնում իր դիմաց։ «Մեկը հին, խավար հեքիաթի, ջադուների ու հրեշտակների լի աշխարհը, ուր կա կեղծիք, նախանձ, տարփանք, ատելություն, բռնություն... մյուսը իրական, ընկերական, պարզ և ազատ գրքերի, մտքի և գործի աշխարհը, ուր ամենքը հավասար են. իրար պաշտպանում են, շինարարում են, մաքրում երկրի երեսը»։ Նիգյարը վճռականորեն գնում է դեպի շինարարություն, մտքի և գործի աշխարհը, ուր նա ազատվում է անցյալի անիծյալ նախապաշարումներից և ձեռք է բերում իր մարդկային ընության ողջ գեղեցկությունը։

Սովետական մարդու վերափոխման պրոցեսը Դեմիրճյանը նկարագրել է նաև «Ռաշիդ» վիպակում։ Սովետական կարգերի շնորհիվ Ռաշիդը բարձրացել է անհայտությունից, ճնշումից և դաժան շահագործումից և դարձել հասարակական գեմք։ Նա ամբողջ էությամբ նվիրված է չքավոր հողագործ գյուղացիների պաշտպանության գործին, նոր գյուղի կառուցման գործին, դրա մեջ տեսնելով իր և իր նման մարդկանց կյանքի հեռանկարը։

Հայ ժողովրդի ռևոլյուցիոն գիտակցության աճումը և նրա պայքարը սովետական կարգերի հաստատման համար Դեմիրճյանը ճշտորեն նկարագրել է «Ընկերները» պատմվածքում։ Հեղինակն արտահայտում է այն իրեանը, որ արդարացի պայքարի գիտակցությամբ տոգորված մարդիկ արտամարհում են մահը, դրսևորում մեծ անձնազոհություն և խիզախություն։ Պատմվածքի հերոսները՝ Գուրգենը և Ղևոնդը անդրաժան ընկերներ են, նրանք անհունորեն սիրում են միմյանց։ Քաղաքացիական կռիվների տարիներին նրանք ընդունվում են կոմունիստական շարքերը և դառնում պարտիզաններ։ Հրամանատարությունը հանձնարարում է երիտասարդ պարտիզաններին կարևոր մի նամակ հասցնել ընդհատակում աշխատող կոմունիստներին և պայքնցնել ռազմական նշանակություն ունեցող կամուրջը, որով հակառակորդը պատրաստվում էր փոխադրել իր հրետանին, կասեցնել Կարմիր Բանակի դրքերի հարձակումը։ Հանձնարարությունը դեռևս չկատարած, ընկերները գերի են ընկում դաշնակցական բանդայի ձեռքը։ Հարբած սպան քննությամբ ոչինչ չի կարողանում պարզել։ Բանտարկված ընկերներին սպան տալիս է ատրճանակ մի փամփուշտով և առաջարկում՝ կենդանի կմնա և կպատվի նա, ով կսպանի մյուս ընկերոջը։ Այս առաջարկը անհնարելի է թվում միմյանց ջերմորեն սիրող ընկերներին։

Երկարատև տանջանքներից հետո, երբ ամեն մեկը ցանկանում է զոհվել և ազատել մյուսին, ընկերներից մեկը՝ Գուրգենը ինքնասպան է լի-

նում։ Ընկերոջ վրեժը լուծելու որոշումով ազատվում է Ղևոնդը, նա գնում, կատարում է հրամանատարության առաջադրանքը։ Դուրգենի ինքնասպանությունը սխրագործություն է, անձնազոհություն կյանքի համար։ Միանգամայն արդարացի է նա, երբ ընկերոջն ասում է. «...տեղ կա պետք է ապրել, տեղ կա պետք է մեռնել, մի կարծի թե ամեն ապրել ապրել է»։ Ռևոլյուցիայի հաղթանակի գործին ամբողջ կյանքով նվիրված մարդու համար նման դիտակցությունը բնական է։ Դուրգենը հասկանում է իր կատարած անձնազոհության նշանակությունը։ Դեմիրճյանը ճշտորեն ցույց է տվել, որ արդարացի պատերազմի մեջ են ծնվում խիզախ և անձնուրաց մարդիկ, որ հերոսության նախապայմանը ջերմ հայրենասիրությունն է։

Սովետական շրջանում Դեմիրճյանը գրել է ավելի քան 10 դրամա, որոնցից մեծ մասի նյութը սովետական կյանքն է, ինչպես «Փոսֆորային շողը», «Ստապուտանը», «Նապոլեոն Գորկոտյանը» և ուրիշները։ Դեմիրճյանի դրամատուրգիայի մեջ առանձնակի տեղ է գրավում «Քաջ Նազարը» կոմեդիան և «Երկիր հայրենիք» պատմական դրաման։

«Քաջ Նազարը» սովետական ժամանակաշրջանում Դեմիրճյանի գրած առաջին դրամատիկական երկն է։ Հովհ. Թումանյանից և Ավ. Իսահակյանից հետո ժողովրդական այդ նշանավոր հեքիաթը Դեմիրճյանը մշակել է նոր սկզբունքներով՝ ընդգծելով և զարգացնելով հեքիաթի հատկապես քաղաքական բովանդակությունը։ Ծույլ, վախկոտ և պարծենկոտ Նազարը պատահականությունների բերումով դառնում է «հերոս» և հետո՝ թագավոր։ Նազարը ժողովրդին վերաբերվում է բոլոր բուն միապետներին և ժամանակակից բուրժուական պետական խեղկատակներին հատուկ արհամարհանքով։ Բայց երկար չի տևում բախտի խաղը. պատահականորեն ձեռք բերված գահը կորչում է նույնպիսի պատահականությամբ։ Պահպանելով հեքիաթի ազգային կոլորիտը, Դեմիրճյանը խորացրել և ընդհանրացրել է նրա բովանդակությունը, ցույց տալով, որ Նազարի կյանքի ուղին տիպական է շատ բռնակալների համար։ «Քաջ Նազարը» ոչնչացնող մի սատիրա է միապետների, պատահականորեն իշխանության գլուխ անցած բախտախնդիր բռնակալների մասին։

Դեմիրճյանի դրամատիկական հաջողված երկերի թվին է պատկանում «Փոսֆորային շողը» պիեսը։ Այս գործում հեղինակը ձգտել է գեղարվեստորեն պատկերել 1930-ական թվականների վերջին մեր արդյունաբերության զարգացման մեջ գոյություն ունեցող դժվարությունները, սովետական մարդկանց պայքարը արդյունաբերության մեջ բուն դրած վնասարարների և դիվերսանտների դեմ։

Դեմիրճյանը ճշտորեն ցույց է տվել, որ սոցիալիստական հարձակմանը կատաղորեն դիմադրում էր դասակարգային թշնամին, բայց սովետական իշխանության ինդուստրացման և կոլեկտիվացման քաղաքականության հետևողական կիրառումը հողմացրիվ արեց բուրժուական ինտելիգենցիայի վնասարարական դավերը։

Ժամանակակից թեմայով գրված մի քանի պիեսներից հետո, Դեմիրճյանը նորից դիմում է պատմական թեմատիկային, վերարտադրելով հայրենիքի պաշտպանության համար հայ ժողովրդի մղած հայրենասիրական պայքարի դրվագներից մեկը։ Հայտնի է, միջին դարերում ժողովրը-

դական հայրենասիրությունը ցայտուն կերպով դրսևորվել է արտաքին նվաճողների դեմ մղած պատերազմների ընթացքում։ Սովետական ժողովուրդը սիրում և գնահատում է ջերմ հայրենասիրությամբ տոգորված անցյալի այդ հերոսական տրադիցիաները, որոնք գեղարվեստական մեծ ուժով վերարտադրվեցին սովետական գրականության մեջ։

«Երկիր հայրենիք» պատմական դրամայում Դեմիրճյանը նկարագրում է հայոց պատմության 11-րդ դարի առաջին կեսի մի քանի բնորոշ իրադարձությունները, կապված Անիի պետական անկախության հարցի հետ։ Հունական օրիենտացիայի կողմնակիցները՝ տերության խնամակալ Վեստ Սարգիսը, կաթողիկոսը և մյուսները, որոնք դավաճանարար Անին վաճառել էին Հունաց Մոնոմախ կայսրին, սարկորեն ընդունում են նրա դեսպանին և հակառակ ժողովրդի կամքին, կրկին նորոգում Անիի վաճառման հետևարը։ Պետական ինքնուրույնության այդ ամոթալի վաճառքը կանխելու համար հայրենասեր սպարապետ Վահրամ Պահլավունին և նրա համախոհները Անի են բերում և գահ բարձրացնում հայածական վիճակում գտնվող պատանի Դավիթին։ Իր գործունեության առաջին իսկ քայլից Դավիթ II-ը վճռական միջոցների է դիմում Անիի ինքնուրույնությունը պաշտպանելու համար։ Նա պատռում և չեղյալ է հայտարարում Անիի վաճառման հետևարը, բանտարկում է Վեստ Սարգսին և մյուս դավադիրներին, համախմբում է ռազմական ուժերը և ջախջախում բյուզանդացիների և սելջուկների զորախմբերը։

Ինչպես ցույց է տալիս սյուժեն, «Երկիր հայրենիք» դրամայում կերպարները բախվում են ոչ թե ընտանեկան, կենցաղային հարաբերությունների մեջ, այլ պետական գործունեության ոլորտում, որտեղ որոշվում է Հայրենիքի և ժողովրդի պատմական բախտը։ Այդ հանգամանքը պայմանավորում է դրամայում հանդես եկող բնավորությունների քաղաքական հայացքները և ձգտումները։

Դեմիրճյանը մի քանի բնորոշ գծերով պատկերում է կերպարների գործունեության պատմական միջավայրը։ Այդ հայ կուլտուրայի զարգացման այն շրջանն է, երբ ծաղկում էր Անին իր սքանչելի ճարտարապետությամբ և տարբեր արվեստներով, երբ բնդգծվում միջնադարյան եկեղեցական ճնշման, երկրով մեկ տարածվում էր թոնդրակեցիների շարժումը, որպես ժողովրդական զանգվածների սոցիալական բողոքի արտահայտություն։

Դեմիրճյանի պիեսների մեծագույն մասը բեմադրվել է մեր ռեսպուբլիկայի թատրոններում, հարստացրել նրանց ռեպերտուարը, հուզել և ոգեորել սովետական հանդիսատեսին։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին նոր աստիճանի բարձրացավ Դեմիրճյանի ստեղծագործությունը և տոգորվեց սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության դաղափարով։ Նա որոնեց և գտավ նոր ձևեր, արտահայտչական նոր միջոցներ, բացահայտելու սովետական ժողովրդի հզորությունը, նրա պայքարի վեհությունը և անհուն հայրենասիրությունը։ Դեմիրճյանի Հայրենական պատերազմի շրջանի հաջողված պատմվածքները, ինչպես «Մոշտանգվածի ավանդը», «Անխուսափելին», «Վերադարձ», «Ծնողները» ճշտորեն արտահայտում են ռուս ժողովրդի անպարտելի ուժը, նրա կամքը և տոկունությունը։ «Ծնողները» պատ-

մրված ծքում Դեմիրճյանը նկարագրում է, թե ինչպես պատերազմի բովում Սովետական Բանակի կապիտան Զերկասովը տիրապետում է ատելության գիտությանը։ Ֆաշիստներից ետ վերցրած հայրենի գյուղում, հայրենի տանը կապիտան Զերկասովը տեսնում է իր ծնողների խոշտանգված դիակները։ Անմեղ մարդկանց գազանային սպանությունը կապիտանի հոգին լցնում է բուռն ատելությամբ. «Պատերազմը խստացավ նրա համար, դառավ մարդկության համար մղվող մի գերագույն գործ, մեծ, ընդարձակ, համաշխարհային։ Նա այդ բոլորն, ասենք, լավ գիտեր, երբ պատերազմը սկսվել էր։ Բայց հիմա նա խորապես զգաց այդ։ Խեղդված ծնողի գուբս ընկած աչքերում նա տեսավ այնպիսի մի բողոք, այնպիսի մի ցասում, որ նրա ողջ կյանքի համար հերիք էր։ Նա տեսավ անմոռանալին։ Եվ եթե նա դսպեց իրեն, չգոռաց, այդ միայն այն մտքից էր, որ նա վճռեց վրեժխնդիր լինել, վճռեց ազատել գերված երկիրը, մարդկությունը»։

«Անխուսափելին» պատմվածքում ֆաշիստ սպան, հարցաքննելով պարտիզանի հորը, սոսկում է նրանից։ Ֆաշիստը ռուս գյուղացու հայացքի մեջ տեսնում է երկրի ողջ բնակչության։ Նա այրող նախանձ է զգում, տեսնելով գյուղացու բարձր հասակը, ուղիղ իրանը, կոշտ, ջլոտ մատները և այն համառ, պինդ կեցվածքը, որով նրա ոտները կպել, տիրում էին հողին, այն հարուստ սեահողին, որի առատության մասին սպան առասպելներ էր լսել։ Նա շատ էր տեսել այդպիսի գյուղացիներ և հիմա իր դիմաց կանգնածը կարծես արտահայտում է նրանց բոլորի ուժը։ Ֆաշիստ սպան սարսափով գիտակցում է, որ աննկարելի է հաղթել ռուս ժողովրդին։

Բայց նման ճշմարտացի պատմվածքների հետ Դեմիրճյանը գրել է նաև իդեական և գեղարվեստական տեսակետից արատավոր գործեր, ինչպես «Կոորդինատները», «Բժիշկը» և «Մանրապատումների» մեծ մասը, որոնց մեջ զգացվում է ֆորմալիստական, դեկադենտական հայացքների ազդեցություն։

Սովետական ժողովուրդը բարձր է գնահատում պատմական անցյալի լավագույն տրադիցիաները, որովհետև «սովետական հայրենասիրության մեջ ներդաշնակորեն զուգակցվում են ժողովուրդների ազգային տրադիցիաները և Սովետական Միության բոլոր աշխատավորների կենսական շահերը»[1]։ Ազգային տրադիցիաների այսպիսի ճշմարիտ գնահատության հիման վրա, Հայրենական պատերազմի տարիներին սովետական գրականությունը ստեղծեց մի շարք պատմական վեպեր, որոնք վերարտադրում էին ժողովրդի մղած հերոսական պայքարը հնագույն ժամանակներում օտարերկրյա նվաճողների դեմ և մեր մեծ նախնիքների հայրենասիրության լավագույն օրինակներով սովետական մարդկանց ոգեշնչում արդարացի պատերազմի՝ ընդդեմ ֆաշիստական օկուպանտների։

Սովետական գրականության զարգացման գեղեցիկ նախորդ ժամանակաշրջանում ելնելով մարքս-լենինյան պատմագիտության դրույթներից Ա. Տոլստոյը («Պետրոս առաջին»), Ա. Զասլիգինը («Իվան Ստեփան»), Նովիկով-Պրիբոյը («Ցուսիմա»), Սերգեև—Ցենսկին («Սևաստոպոլյան պայքարը») և ուրիշները մշակեցին սովետական պատմավեպի սկզբունքները,

[1] Ի. Վ. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին, Հայպետհրատ, 1943, էջ 169։

որոնց հիման վրա եղբայրական ժողովուրդների գրականության մեջ ստեղծվեց և զարգացավ պատմավիպագրությունը։

Օգտագործելով սովետական պատմավեպի նվաճումները և հայ պատմավիպագրության լավագույն տրադիցիաները, Հայրենական պատերազմի տարիներին Դեմիրճյանը ստեղծեց իր ամենախոշոր երկը՝ «Վարդանանք» պատմավեպը։ Այդ գործով նա սկիզբ դրեց սովետահայ պատմավիպագրությանը և նոր աստիճանի բարձրացրեց հայ պատմավեպի լավագույն տրադիցիաները։

Հայ ժողովրդի պատմության հերոսական էջերից մեկի գեղարվեստական վերարտադրումով Դեմիրճյանը ստեղծեց ջերմ հայրենասիրությամբ և արտաքին նվաճողների նկատմամբ այրող ատելությամբ տոգորված մի վեպ, որն իր պատմական առաջավոր բովանդակությամբ արձագանքում էր սովետական ժողովրդի մղած հերոսական պայքարին։ Իր բազմադարյա պատմության ընթացքում արիաբար մարտնչելով արտաքին նվաճողների դեմ, հայ ժողովուրդը պաշտպանել է իր ազատությունն ու անկախությունը, իր կուլտուրան ու մայրենի լեզուն։ Այս իմաստով «Վարդանանքը» յուրատեսակ փիլիսոփայություն է հայրենի երկրի մասին, ժողովրդի ստեղծագործական սքանչելի ունակությունների, անկեղծ ոգու և հերոսության մասին։

«Վարդանանքիս» հիմքում ընկած է հայ ժողովրդի պատմական անցյալի կարևոր իրադարձություններից մեկը՝ 450—451 թթ. ապստամբությունը պարսկական բռնակալության դեմ։ Պատմական ժամանակաշրջանի բնորոշ փաստերի, դեմքերի և իրադարձությունների ընդհանրացումով Դեմիրճյանը հյուսել է վեպի ինքնատիպ սյուժեն։ «Վարդանանքը» տոգորված է իսկական պատմականությամբ, մի հատկություն, որն անհրաժեշտ նախապայման է պատմավեպի համար։ Վեպի մեջ պատմական դեպքերը սերտորեն հյուսվում են մարդկանց բախտի հետ, պայմանավորում են բախումները և պայքարը հասարակական տարբեր դասերի միջև։ Հազկերտ II-ի չարագուշակ հրովարտակը հավատուրացության մասին մեծ տագնապ է առաջացնում Հայաստանում, մարդիկ հասկանում են, որ դա սոսկ հավատի հարց չէ, որ հավատուրացության քողի տակ պարսկական բռնակալությունը ձգտում է ոչնչացնել հայ ժողովրդին։

«Վարդանանքիս» մեջ ցայտուն գծերով վերարտադրվում են սոցիալական հակամարտությունները շահագործվող և շահագործող դասակարգերի միջև, նրանց տարբեր վերաբերմունքը օտարերկրյա բռնակալության նկատմամբ։ Անհամատեղելի են մի կողմից շինականների, մյուս կողմից՝ իշխանների ու հոգևորականների շահերը։ Տարբեր նշանակություն ունի նրանց համար հայրենիքը։ Տանջված շինականի համար հայրենիքը տաժանելի աշխատանքով ստեղծված, իր և իր նախնիքների արյունով պաշտպանված երդիքն է, այն հողը, որը, դառն է՝ բայց միաժամանակ սիրելի, որովհետև կյանքի աղբյուր է նրա համար։ Նախարարի «հայրենիքը» իր կալվածքն է, ֆեոդալական իրավունքի տիրապետությամբ և դաժան շահագործման անձեռնմխելի արտոնություններով։

Հայրենիքի պաշտպանության վերաբերյալ ձևավորվում են երկու հակադիր ուղղություն. մեկը՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի, մյուսը՝ մարզպան Վասակի գլխավորությամբ։ Վասակի քաղաքականությունը հանգում էր հայ ժողովրդի ինքնուրույնության ոչնչացմանը, օտարերկրյա բռնա-

կալության շահերի պաշտպանությանը։ Վարդանը վճռականապես դեմ էր հավատուրացության, նա հասկանում էր, որ հավատի հարցը միայն պատրվակ է հայ ժողովրդին ինքնուրույնությունից զրկելու և ստրկացնելու համար։ Այդ պատճառով նա թելադրում է Հազկերտի հրովարտակի մերժողական պատասխանը, ռազմական դաշինք է կռում հոների հետ, համախմբում համակիր նախարարների զորքը, կազմակերպում է ժողովրդական աշխարհազորը, գիտակցելով, որ արտաքին նվաճողների դեմ մղվող կռվում, առանց ժողովրդի մասնակցության, անհնարին է հաղթել։ Վարդանը կապեր է հաստատում հարևան ժողովուրդների՝ վրացիների և ազվանների հետ։ Նա գիտե, որ պարսկական բռնակալությունը սպառնում է նաև հարևան ժողովուրդներին և այդ արհավիրքի դեմ պետք է դուրս գալ միացյալ ուժերով։ «Մենք, վրացիները, ազվանները մի բախտի ժողովուրդ ենք. —ասում է Վարդանը,—ուրեմն մի ժողովուրդ ենք»։ Անդրկովկասյան ժողովուրդների հարազատության այդ գաղափարը վճռական նշանակություն է ունենում հաղթանակի համար, Դեմիրճյանը ցույց է տվել, որ Վարդանի ուժն այն է, որ նա կարողանում է դուրս գալ ֆեոդալական-եկեղեցական մտայնության սահմաններից, դնալ դեպի ժողովուրդը, հասկանալ, որ հայրենիքի իսկական պաշտպանը աշխատավոր ժողովուրդն է։

Միանգամայն տարբեր դիրքերում է գտնվում Վասակ Սյունին։ Ժողովրդին սպառնացող մահացու վտանգի պահին փառասեր իշխանին իր դիրքի և պաշտոնի հարցը ավելի է մտահոգում, քան ժողովրդի ճակատագիրը։ Առերես համաձայնվելով Վարդանի և մյուսների հետ, Վասակը գաղտնի դավեր է նյութում ապստամբների դեմ, նախապատրաստում Հայաստանը ինքնուրույնությունից զրկելու և պարսկական բռնակալությանը հանձնելու ոճրագործ ծրագիրը։ Բայց, ամենուրեք, Վասակը հանդիպում է համառ դիմադրության։ Նա չի կարողանում կոտրել շինականի անընկճելի ոգին, խեղդել իր կնոջ և զավակների հայրենասիրության և արժանապատվության զգացումը։ Փառասիրությունը, ատելությունը և սարսափը ժողովրդի հանդեպ Վասակին ի վերջո հասցնում են դավաճանության և բարոյական անկման։

«Վարդանանքիս» կարևոր արժանիքը ժողովրդի պատմական ինքնուրույն դերի վերարտադրությունն է, ժողովրդական կյանքի լայն և բազմակողմանի վերարտադրությունը կենդանի և տիպական կերպարների միջոցով։ Վեպի հիմնական հերոսը հայ ժողովուրդն է, պարսկական բռնակալությունից դառնացած, բայց իր ինքնուրույնությունը պահպանելու անսահման ձգտումով լցված հայ ժողովուրդը։

Ջերմությամբ և խանդաղատանքով է կերտել Դեմիրճյանը ժողովրդի ընդերքից դուրս եկած հերոսներ Առաքելին, Խանդուտին, Սահակին, Արքինին և ուրիշներին, որոնք արտահայտում են ժողովրդի հայրենասիրությունը, մտքերի և զգացմունքների հարուստ աշխարհը, բարոյական վեհությունը։

Ժողովրդի լավագույն գծերի կենդանի մարմնացումն է Արծվին, վեպի ամենահմայիչ կերպարներից մեկը։ Արծվիի պատկերացումով անձնազոհ կռիվը հայրենիքի համար նույնքան բնական է, ինչպես կյանքը։ Հայրենի հողի վրա նա շրջում է Անթեյի գիտակցությամբ և իր ժողովրդի կյանքի հարատևությունը Արծվին անբաժանելի է համարում հայրենի

հողից, իսկ ով սպառնում է ժողովրդի կյանքի բնական ընթացքին, պետք է ոչնչացվի։ Նա այդպես է վարվում պարսիկ զինվորի հետ, որն արգելում է ձիերին լողացնել Արաքս գետում, նա սպանում է ծպտված դավաճանին, որը ցանկանում է Վարդանին նենտահարել, նա նույն վճռականությամբ կռվում է Ավարայրի ճակատամարտում՝ իր հայրենիքի համար։ Վեպի բոլոր հերոսներից Արծվին ամենից շատ է մոտենում մեր ժողովրդական էպոս «Սասունցի Դավթի» հերոսներին, ոչ միայն իսկական էպիկական հերոսին վայել խիզախությամբ, այլև անհուն սիրով դեպի հայրենիքը և ժողովուրդը։

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդը Դեմիրճյանին հնարավորություն է տվել բացահայտելու, որ կրոնական երանգ ունեցող Վարդանանց պատերազմն իր բուն էությամբ սոցիալական ազատագրական պատերազմ էր, ճնշված, հարստահարված ժողովրդի հերոսական պայքարը օտար և «հայրենիք» բռնակալների դեմ։

Վեպի առաջին գլուխներից մեկում Դեմիրճյանը գեղարվեստական մեծ ուժով նկարագրել է պարսիկ հարկահանների դաժան կամայականությունների էպիզոդներից մեկը։ Վանքը կողոպտելուց հետո հարկահանները գյուղ են մտնում և նորից պահանջում արդեն մի քանի անգամ վերցված հարկը։ Լկտիաբար ծաղրելով և արհամարհելով շինականներին, հարկահանները խլում են նրանց հացի վերջին կտորը։ Պարսիկ բռնակալների այդ բարբարոսական քաղաքականության նպատակն էր սովամահության միջոցով հնազանդեցնել ժողովրդին։ Բայց սոսկալի տառապանքները ոչ թե ընկճում են շինականներին, այլ ավելի ու ավելի խորացնում նրանց ատելությունը բռնակալության դեմ։ Շինական Առաքելը ասում է. «Գրյուխը կրարձրացնի ռամիկը. գլուխը կրարձրացնի հայոց աշխարհը։ Այնպես կրարձրանա, որ պարսիկը գույնը կգցի»։ Գլուխը բարձրացնում է ռամիկը՝ լցված անասելի զայրույթով պարսկական բռնակալների դեմ։ Հողը ու անից զրկված շինականները ընդվզում են բռնության դեմ և երկրով մեկ ծավալում տարերային ապստամբությունը։

Դեմիրճյանը ճշտորեն նկարագրել է որ երգանքը ազատության, արդարության և խաղաղության մասին վառ է մնացել ժողովրդի մեջ անտեսական և հոգևոր հարստահարության այդ մռայլ ժամանակներում անգամ։

Պարսիկ բռնակալների կողմից խոշտանգված Սահակ շինականը հուսով դիմում է Վարդան Մամիկոնյանին։

— Կռվենք, սպարապետ, սերունդ-սերունդ կռվով գնանք՝ մի տեղ լույսը կրացվի...

Վարդանը հուզված, լցված նայեց Սահակին, բազմության և գլուխը շարժեց ախուր.

— Ազատությունը դժվարին բան է, շինական... այո, գնանք սերունդ-սերունդ հասնենք...»։

Ապագայի այդ մեծ հավատով են տոգորված «Վարդանանքի» լավագույն կերպարները։ Այդ հավատը ուժ է ներշնչում մի բուռն ժողովրդի, կռվի ելնել պարսկական հզոր տերության դեմ և պարտության մատնել իրենից մի քանի անգամ թվով գերազանց պարսկական զորքը։

Ռեալիստական կլասիկ պրոզայից, հատկապես Գոգոլի պրոզայից Դե-

միրճյանը ժառանգել է տիպականացման բարդ արվեստը, որը առավել չափով արտահայտվել է «Վարդանանքիթ մեջ։ Դեմիրճյանը չի տարվում նկարագրվող պատմական ժամանակաշրջանի բոլոր դեպքերի ընդգրկումով։ Վերարտադրելով հնագույն ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունները, գրողն առանձնացնում է էականը երկրորդականից, պատմական առաջավոր ձգտումը՝ հետամնացից։

Դեմիրճյանի վեպում ավել կամ պակաս մանրամասնությամբ նկարագրված են տասնյակ հերոսներ, շինականներ, նախարարներ, հոգևորականներ։ Թե պատմական դեմքերը և թե հեղինակի ոչ պատմական կերպարները ցայտուն անհատականություններ են։ Այդ հերոսները կենդանի մարդիկ են, միաժամանակ հասարակական որոշ դասերի ներկայացուցիչներ։

Վեպում հանդես եկող կերպարների բնորոշ գծերը հեղինակը բացահայտում է նրանց անձնական կյանքի և հասարակական գործունեության մեջ։ Վարդան Մամիկոնյանի կամքը և վճռականությունը մասնավոր կյանքում (նրա հրաժեշտը մոր հետ, հանդիպումը և զրույցը եղբոր հետ, Ավարայրի ճակատամարտի վճռական պահին սիրելի որդուն ստույգ մահվան ուղարկելը) արտահայտվում է այնպես, ինչպես հասարակական կյանքում՝ Արտաշատի ժողովում, Հաղկերտի ատյանի առաջ և այլն։ Դեմիրճյանը վարպետորեն ցույց է տվել իր կերպարների անձնական վարքագծի հասարակական-քաղաքական հիմքերը։ Վեպի հիմնական կերպարները որպես բնավորություններ ամբողջանում են հասարակական պետական գործունեության ոլորտում, առանց որի նրանք կդադարեին պատմական վեպի կերպարներ լինելուց։ Միհրներսեհը, Հաղկերտը, Նյուսալավուրը կերտված են սատիրական մեծ ուժով, կերպարներ, որոնք ցայտուն կերպով արտահայտում են բռնակալության ողջ դաժանությունը, ենթգությունը և ներքին անանկությունը։

Հարուստ և ինքնատիպ է Դեմիրճյանի լեզուն։ Վարպետորեն օգտագործելով մեր լեզվի անսպառ գանձերը, ժողովրդական հյուսիսկ դարձվածքները, գրողն ամենաբազմազան նրբերանգներով արտահայտում է իր հերոսների ներքնաշխարհը, հոգեբանական բարդ անցումները, շոշափելի կոնկրետությամբ նկարագրում իրադրություններն ու երևույթները։

Սակայն «Վարդանանքը» ունի լեզվական թերություններ. նախ հեղինակը չափից շատ է օգտագործում գրաբարի հնացած բառապաշարն ու քերականական ձևերը, որը վնասում է գեղարվեստական տեքստի մատչելիությանը, և հետո՝ երբեմն խախտում է հայոց լեզվի քերականական կանոնները, որ միանգամայն անընդունելի է մեր լեզվի զարգացման տեսակետից։

Սովետահայ քննադատությունը ցույց է տվել «Վարդանանքիթ նաև գաղափարական սխալները։ Վարդանանց պատերազմի մասին հայ պատմագրության տվյալների նկատմամբ անքննադատ վերաբերմունքը հեղինակին հասցրել էր կրոնի նշանակության գերագնահատմանը, որի հետևանքով հայ ժողովրդի հայրենասիրական շարժումը վեպի առաջին հրատարակության մեջ սխալ կերպով ներկայացվում էր որպես նահատակություն հավատի համար։ Բայց վեպի երկրորդ, վերամշակված հրատարակության մեջ Դեմիրճյանը հիմնականում վերացրել է այդ սխալները։

Հետպատերազմյան տարիներին Դեմիրճյանը շարունակում է աշխատել

ПА-3941

րեն մասնակցել մեր գրական կյանքին։ Սովետական մարդու հերոսական առօրյան, նրա վեհությունն արտահայտելու համար գրողը դիմում է կյանքի նոր երևույթների վերարտադրմանը։ Ոգեշնչված կոմունիզմի կառուցման վիթխարի հեռանկարներով Դեմիրճյանը իր պատմվածքներում, մամուլում շարունակաբար տպագրվող ակնարկներում և հոդվածներում վեր է հանում սովետական մարդկանց աշխատանքային սխրագործությունները, հատատառում ստեղծագործական աշխատանքի նրանց անկոտրելի ձգտումը։

Դեմիրճյանի վերջին տարիների ստեղծագործության մեջ նշանակալից է «Տունը» պատմվածքը։ Հատատառուն բնակատեղ, հայրենի օջախ ունենալու երազանքը մշտապես ուղեկցել է հալածված, պանդուխտ հայ մարդուն։ Այդ երազանքը սրտում մեռել են «Տունը» պատմվածքի հերոս Արթինի հայրը, պապը։ Նրանք, ինչպես և Արթինը, կառուցել են բազմաթիվ տներ, ամեն անգամ կարծելով, թե այն կլինի հատատառուն օջախ, բայց և ամեն անգամ տեղահան են արվել, բռնությամբ շպրտվել տեղից-տեղ։ Տարիների տառապանքը Արթինին բերել է այն համոզմանը, որ ինքը տուն չի կարող ունենալ, քանի դեռ հայրենիք չունի։ «Ես տունը մերը չէ»,—ասում է Արթինը սեփական քրտինքով Հալեպում կառուցված իր տան մասին։

Արթինն ու նրա որդիները սեփական տուն՝ հայրենիք են գտնում փոխադրվելով Սովետական Հայաստան։ Իր հերոսների կյանքում կատարված արմատական փոփոխությունները Սովետական երկրում Դեմիրճյանը ներկայացնում է նրանց՝ մասնավորապես Արթինի որդիների, հայրենասիրական բնավորությունների էվոլյուցիան պատկերելու միջոցով։ Մինչև Արթինը հայրենիք ունենալու իր տարիների երազանքը իրականացած է տեսնում Սովետական Հայաստանում կառուցված իր տան մեջ. որդիների համար այդ տունը, այն բոլոր տներից մեկն է, որպիսին իրենք կարող են գտնել Սովետական երկրում ամենուրեք, որտեղ որ ցանկանան ապրել և աշխատել։ Նրանց համար տունն և հայրենիքն է սովետական անծայրածիր երկիրը։

Դեմիրճյանը գեղարվեստորեն արտահայտում է այն գաղափարը, որ աշխատավոր մարդու հայրենիքն այն է, օրտեղ հարգվում է նրա աշխատանքը, մարդկային ձգտումներն ու արժանապատվությունը։ Միաժամանակ Դեմիրճյանը ցույց է տալիս, թե որքան մեծ է սովետական հայրենասիրությունը հասկացությունը, որքան լայն է սովետական մարդու համար հայրենիքը բնությունը։

Սովետական գրականության ստեղծագործական մեթոդի՝ սոցիալիստական ռեալիզմի կենսագործումով Դեմիրճյանը հասել է ստեղծագործական մեծ նվաճումների, սովետական գրականությունը հարստացնելով գաղափարական և գեղարվեստական տեսակետից արժեքավոր երկերով։